

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

01.03.2019

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

### ՕՐԱԿԱՐԳ

1. 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում (զեկ.՝ Կ. Պողոսյան):
2. Ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների քննարկում (զեկ.՝ Կ. Պողոսյան):
3. Կրթական ծրագրերի վերամշակման ընթացքի մասին քննարկում (զեկ.՝ ԿԾ պատասխանատուներ):
4. Ընթացիկ հարցեր:

### ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփումը: Նա նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է ժամանակացույցին համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել: Լուծարքային շրջանին մասնակցած ուսանողների գերակշիռ մասը դրական գնահատական են ապահովել 1-ին լուծարքային շրջանի ժամանակ: Զեկուցողը ըստ կուրսերի ներկայացրեց լուծարքային շրջանի ընդհանուր պատկերը.

Պատմություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 11 ուսանող, որոնցից 8-ը 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ, իսկ 3-ը դրական գնահատական է ստացել 2-րդ լուծարքային շրջանում:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 2 ուսանող, որոնք 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ:

Տարրական մանկավարժություն և մեթոդիկա կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 16 ուսանող, որոնցից 11-ը 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ, իսկ 5-ը՝ 2-րդ լուծարքային շրջանում:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 6 ուսանող, որոնցից 5-ը դրական գնահատականներ են ստացել 1-ին լուծարքային շրջանում, 1-ը՝ երկրորդ:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:*

### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյան: Զեկուցողը ներկայացրեց ամբիոններում կատարված քննարկումների արդյունքները: Կուրսային և ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2018-2019 ուստարվա սեպտեմբերից: Անհատական ծանրաբեռնվածությամբ նախատեսված կուրսային և ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաները, որոնք քննարկվել են ամբիոնային նիստերում, կատարվել են ուղղումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախաձեռնությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Նշվեց, որ կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները համապատասխանում են պահանջվող չափանիշներին, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք արդիական են, ուսանողի համար ներկայացնում են գիտական հետաքրքրություն:

Յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ: Զեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր դասախոսի հանդիպման ժամանակացույցը հաստատված է ամբիոնի կողմից և փակցված է հայտարարությունների տախտակին:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*– Ամբիոնային հաշվետվությունները կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ համարել բավարար:*

***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին կրթական ծրագրերի ղեկավարները: Նրանք նշեցին, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի հրամանի համաձայն ֆակուլտետում, ըստ մասնագիտությունների, ձևավորվել են աշխատանքային խումբեր՝ կրթական ծրագրերը վերամշակելու համար:

Նրանք նշեցին, որ կրթական ծրագրերի մշակումը կարևոր և անհրաժեշտ նախապայման է ծրագրային հավատարմագրման համար: Կրթական ծրագրերի վերամշակված տարբերակը կնպաստի մասնաճյուղի ռազմավարական ծրագրի իրականացմանը, կօգնի ուսումնառության և գնահատման բազմազան և արդիական մեթոդների ճիշտ կիրառմանը՝ կրթական վերջնարդյունքներում ունենալու մասնագիտական հարուստ գիտելիքներ և իմացություն, գործնական մասնագիտական ընդհանրական կարողություններ, որոնք շրջանավարտներին ապագա կարիերայի լայն հնարավորություններ կտան և կհամապատասխանեն տվյալ մասնագիտության ոլորտում աշխատաշուկայի կողմից առաջադրվող պահանջներին:

Ձեկուցողները ներկայացրին, որ բոլոր աշխատանքային խմբերը իրականացրել են քննարկումներ և մինչև սթ. մարտի 20-ը պետք է ձևակերպեն իրենց ծրագրերի առաջարկի հայտը և ներկայացնեն ՈԻՄՎ:

***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*– Կրթական ծրագրերի վերամշակման ընթացքը համարել բավարար:*

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Աղաբաբյան